Առաջին անգամ… և դա ի շնորհիվ IATP-ի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության…
(կամ՝ «Ժամանակակից տեխնոլոգիաները և դրանց կիրառությունը ընդունելության քննությունների ընթացքում»)



Սկսած 20/07/02 ողջ հասարակության ուշադրությունը կենտրոնացած է ընդունելության քննությունների վրա: Ժողովրդի անհանգստությունը մի փոքր նվազեցնելու նպատակով հենց Երևանի Պետական Ճարտարապետության և Շինարարության Համալսարանում անցկացվող Հայ ժողովրդի պատմություն առարկայի ընդունելության քննությունները ուղիղ եթերով հեռարձակվում են ինտերնետում (http://www.iatp.am http://www.edu.am): Այս երևույթը, ընդհանրապես, նորություն է ոչ միայն Անդրկովկասում, այլև ողջ աշխարհում: Եվ այս ամենը շնորհիվ ինտերնետի ուսուցման և մատչելիության ծրագրի (IATP) ու Կրթության և գիտության նախարարության համագործակցության: Ինտերնետի ուսուցման և մատչելիության ծրագիրը օժանդակում է ինչպես տեխնիկապես, այնպես էլ աշխատակիցներ տրամադրելով: Այս կազմակերպության անունից արդեն իսկ բխում է իր գործունեության բնույթը:

Իհարկե, որպեսզի հասկանանք այս բացառիկ երևույթի կարևորությունը, պետք է հարցին ցուցաբերենք երկկողմանի մոտեցում. բացահայտենք ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: Նախևառաջ, քննության ընթացքին հետևումը հասարակության լայն զանգվածների կողմից անպատճառ նպաստում է քննությունների թափանցիկությանը: Իհարկե, այստեղ կարող է հարց առաջանալ. իսկ արդյո՞ք ինտերնետը բաց է մարդկանց լայն զանգվածների առջև: Հենց այս նպատակին է ծառայում ինտերնետի ուսուցման և մատչելիության ծրագիրը, հնարավորություն ընձեռելով իր 10 կենտրոններից, որոնք գտնվում են Հայաստանի տարբեր ծայրերում, անվճար հետևելու քննության ընթացքին: Մյուս կողմից քննությունների ուղիղ հեռարձակումը ինտերնետի միջոցով խթանում է ժամանակակից տեխնոլոգիաների, տվյալ դեպքում ինտերնետի կիրառմանը ինչպես գիտության բնագավառում, այնպես էլ առօրյա կյանքում:

Մեկ այլ տրամաբանական հետևեցում, որը բխում է նշված մտքից. իսկ որքանո՞վ է նպատակահարմար ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծումը մեր կյանք, չէ՞ որ մեր դարերում արդեն կարելի է հանդիպել «ՄԱՐԴ-ՌՈԲՈՏ» պրոբլեմին: Դեռ Մեծն ֆրանսիացի մտածող Ժան Ժակ Ռուսոն կանխատեսում էր հետևյալ վտանգը. քաղաքակրթությունը տանում է դեպի մարդկային հատկանիշների վերացման, սոցիալական անհավասարության և այլն:

Ինչ վերաբերում է սոցիալական անհավասարությանը, ապա պետք է միայն հաշվի առնել, որ այդ անհավասարությունը գալիս է մարդու բնությունից, և թե ինչպես այն կարտահայտվի և ինչի միջոցով, արդեն մեկ այլ խնդիր է: Ի վերջո միշտ պետք է հիշել, որ մենք ենք կերտում մեր քաղաքակրթությունը, մենք ենք պատասխանատու այս կամ այն չարիքի համար: Այսինքն, իրը՝ որպես այդպիսին

չի կարող լինել լավը կամ վատը, չար կամ բարի: Մենք՝ մարդիկս, դրանք կիրառելով, տալիս ենք այդ իրերին դրական կամ բացասական հատկություններ: Հետևաբար, թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, կախված է մարդուց: Պարզապես մարդը պետք է դրանք կիրառի բարի նպատակների համար:

Բացի այդ, անցումային շրջանում գտնվող պետության համար, ինչպիսին Հայաստանն է, պարզապես անհրաժեշտ են նման միջոցների կիրառումը սկսած պարզ համակարգերից, վերջացրած բարդերով: Ավելին, հայ ժողովուրդը բարձր պատրաստվածություն է ցուցաբերում այս գործում: Դրա մասին են վկայում ինտերնետի միջոցով քննության ընթացքին հետևող օրեցօր ավելացող նոր IP հասցեները /20.07.02-29.07.02 արձանագրվել է մոտ 100-ից ավել IP հասցեներ/, ինչպես նաև վերջերս ինտերնետի ուսուցման և մատչելիության ծրագրի (IATP) կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտությունը «Ինտերնետի ազդեցությունը հայ հասարակության վրա և նրա դրական ու բացասական կողմերը» վերնագրով /տե՛ս էջ 3-7/: IP հասցեների աճին է նաև նպաստում վերջերս տեղադրված նոր վեբ տեսախցիկը, որն ունի ավելի լայն հնարավորություններ և ապահովում է ավելի բարձր որակ:

Ինտերնետի միջոցով Հայ ժող. պատմության առարկայի ընդունելության քննության ուղիղ հեռարձակումը կամ ***ՀՀ կրթության և գիտության նախարարի խոսքերով «այս հրաշք երևույթը»***

նաև մեծ արձագանք գտավ զանգվածային լրատվության միջոցների կողմից, այդ թվում «Առավոտ», «Երկիր», «Եթեր» թերթերից, «Արմենիա», «Շանթ», «Պրոմեթևս», «Ա1+», «Հանրային» հեռուստաընկերություններից և Հանրային Ռադիոյից:

Ահա թե ինչպիսի մեծ աղմուկ բարձրացրեց այս երևույթը: Հուսանք և մաղթենք նորանոր հաջողություններ ծրագրին, որպեսզի այն հետագայում իր գործունեությունը տվյալ բնագավառում ավելի ընդարձակի:

Սոցիոլոգիական հարցում

Սիրելի բարեկա'մ, IREX (International Research & Exchanges Board) կազմակերպությունը և նրա շրջանակներում գործող IATP (Internet Access & Training Program) ծրագիրը անց են կացնում հետևյալ սոցիոլոգիական հետազոտությունը, որի նպատակն է պարզել, թե ինչ ազդեցություն ունի Ինտերնետը հայ հասարակության վրա և Ինտերնետի դրական և բացասական կողմերը ըստ սուբյեկտիվ մոտեցումների:
Խնդրում ենք անկեղծ պատասխանել բոլոր հարցերին և ընդգծել ձեզ համապատասխան տարբերակը:
Նախապես շնորհակալություն:

1. Դուք ծանոթ ե՞ք Ինտերնետի ընձեռած հնարավորություններին:
Այո Ոչ Ինչ-որ չափով

2. Եթե այո, ապա ինտերնետի ո՞ր հնարավորություններից եք ամենից շատ օգտվում:
Նորություններից
Էլ-փոստից
Կրթական ծրագրերից
Այլ
տարբերակներ՝_____

3. Ըստ ձեզ, Ինտերնետի ընձեռած այս հնարավորությունները ի՞նչ ազդեցություն են թողնում հայկական մտածողության վրա:
Դրական Բացասական

4. Ինչու՞_____
_____
_____

5. Ճի՞շտ եք արդյոք համարում Ինտերնետում պորնոգրաֆիկ էջերի առկայության փաստը:
Այո Ոչ

6. Ինչու՞_____
_____
_____

7. Եթե ձեզ հնարավորություն ընձեռվեր, ապա ի՞նչը կվերափոխեիք Ինտերնետում:
_____
_____

8. Դուք ծանո՞թ եք IATP ծրագրի գործունեությանը:
Այո Ոչ (Եթե ոչ, ապա խորհուրդ կտայինք այցելել մեր ինտերնետային էջը http://www.iatp.am հասցեով:)

9. Ի՞նչ կուզենայիք փոխանցել **IATP** ծրագրին:

_____

_____

10. Ձեր տարիքը՝ 15-20 21-26 27-32 33-40 41-50 50-60 61 և ավելի:

11. Ձեր սեռը՝ Արական Իգական

Մեթոդական մաս

Ներկայումս մենք ապրում ենք 21-րդ դարում՝ այսպես կոչված «Երկրորդ բնության», տեխնիկայի, ինչու չէ նաև «Ինտերնետի» դարաշրջանում: Այս առիթով մեր սոցիոլոգիական հարցումը նպատակ է հետապնդում ինչ-որ չափով պարզելու, թե ինչպես է հայ հասարակությունը ընկալում և որքանով է այն պատրաստ ընկալել այդ նորագույն տեխնոլոգիաները, մասնավորապես՝ Ինտերնետը :
Նշելով «հայ հասարակություն»՝ մենք ի նկատի ունենք այն մարդկանց, ովքեր մասնակցել են հարցմանը:

Օբյեկտ - ՀՀ. բնակչություն
Առարկա - Ժամանակակից տեխնոլոգիաների (ինտերնետի) ընկալումը հայ հասարակության կողմից:

Խնդիրներ՝
1. Պարզել, թե որքանով է հայ հասարակությունը ծանոթ Ինտերնետի ընձեռած հնարավորություններին:
2. Պարզել, թե ՀՀ. բնակչությունը Ինտերնետի որ հնարավորություններից է ավելի շատ օգտվում:
3. Պարզել, թե ինչպես է Ինտերնետը ներգործում հայ հասարակության վրա:
4. Պարզել, թե ՀՀ. բնակչությունը ինչպես է վերաբերվում Ինտերնետում պորնոգրաֆիկ էջերի առկայությանը, և ինչպիսի հեղինակություն են դրանք վայելում:
5. Պարզել, թե ՀՀ. բնակչությունը որքանքվ է ծանոթ Ինտերնետի մատչելիության ընդլայնման և ուսուցման ծրագրին (IATP):
6. Պարզել, թե ՀՀ-ում որ տարիքի մարդիկ են հիմնականում օգտվում Ինտերնետի ընձեռած հնարավորություններից:
7. Պարզել, թե ՀՀ-ում որ սեռի մարդիկ են հիմնականում օգտվում Ինտերնետի ընձեռած հնարավորություններից:

Հիպոթեզ.
1. Հայ հասարակությունը բավականաչափ ծանոթ է Ինտերնետի ընձեռած հնարավորություններին:
2. ՀՀ. բնակչությունը հիմնականում օգտվում է Էլ-փոստից և Ինտերնետում զետեղված նորություններից:

3. Ինտերնետի ազդեցությունը հայ հասարակության վրա ունի դրական բնույթ:
4. ՀՀ. բնակչության վերաբերմունքը Ինտերնետում պորնոգրաֆիկ էջերի առկայությանը
բացասական է, որից հետևում է, որ դրանք հեղինակություն չեն վայելում ՀՀ.-ում:
5. ՀՀ. բնակչությունը բավականաչափ տեղյակ է Ինտերնետի մատչելիության ընդլայնման և
ուսուցման ծրագրին (IATP):
6. ՀՀ-ում Ինտերնետի ընձեռած հնարավորություններից հիմնականում օգտվում են 15-40 տարեկան
անձինք :
7. ՀՀ-ում Ինտերնետի ընձեռած հնարավորություններից հիմնականում օգտվում են արական սեռի
ներկայացուցիչները :

Հիմնական հասկացությունների սահմանում՝
IATP-Internet Access & Training Program (Ինտերնետի մատչելիության ընդլայնման և ուսուցման ծրագիր)
IREX-International Research & Exchanges Board(Միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհուրդ)
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
Ինտերնետի տարածվածություն՝ որքան մարդ է օգտվում ինտերնետի ընձեռած հնարավորություններից:

Հետազոտության մեթոդ՝ հարցաթերթիկային հարցում:

Սիրելի բարեկա'մ, IREX (International Research & Exchanges Board) կազմակերպությունը և նրա շրջանակներում գործող IATP (Internet Access & Training Program) ծրագիրը անց են կացնում հետևյալ սոցիոլոգիական հետազոտությունը, որի նպատակն է պարզել, թե ինչ ազդեցություն ունի Ինտերնետը հայ հասարակության վրա և Ինտերնետի դրական և բացասական կողմերը ըստ սուբյեկտիվ մոտեցումների:
Խնդրում ենք անկեղծ պատասխանել բոլոր հարցերին և ընդգծել ձեզ համապատասխան տարբերակը:
Նախապես շնորհակալություն:

1. Դուք ծանոթ ե՞ք Ինտերնետի ընձեռած հնարավորություններին:
Այո=25 Ոչ=2 Ինչ-որ չափով=23

2. Եթե այո, ապա ինտերնետի ո՞ր հնարավորություններից եք ամենից շատ օգտվում:
Նորություններից=14
Էլ-փոստից=29
Կրթական ծրագրերից=19
Այլ տարբերակներ՝ չեն օգտվում=2, էլ-գրադարան=1, chat=2

3. Ըստ ձեզ, Ինտերնետի ընձեռած այս հնարավորությունները ի՞նչ ազդեցություն են թողնում հայկական մտածողության վրա:
Դրական=46 Բացասական=2 (չեզոք=2)

4. Ինչու՞. Պատասխանողների մի մասը չի կարողացել պատասխանել այս հարցին, մի մասը գտնում է, որ այն խոչնդոտում է ազգային արժեքների ամրապնդմանը և նպաստում գլոբալիզացիային, իսկ հարցմանը մասնակցած մարդկանց մեծամասնությունը գտնում է, որ բնական է, որ ինտերնետը ունի դրական ազդեցություն, այն ստեղծում է լավ հնարավորություն կապվելու ողջ աշխարհի հետ, ստանալու վերջին տեղեկությունները մեզ հետաքրքրող ցանկացած բնագավառից, բավարարելու հոգևոր պահանջմունքները, հետաքրքիր ժամանակ անցկացնելու, ծանոթանալու մյուս ժողովուրդների մշակույթների հետ, խթանելու է գիտության զարգացմանը: Հարցման ենթարկվածներից մեկը, գտնում է, որ ինտերնետը կարող է դրական կամ բացասական ազդեցություն ունենալ՝ միայն կախված տվյալ մարդուց:

5. Ճի՞շտ եք արդյոք համարում Ինտերնետում պորնոգրաֆիկ էջերի առկայության փաստը:
Այո=25 Ոչ=21 (չեզոք=4)

6. Ինչու՞. Մարդկանց մի մասը դեմ է պորնոգրաֆիկ էջերի առկայությանը Ինտերնետում, քանի որ նրանք գտնում են, որ այդպիսի էջերը մեր ազգային բնութագրի և մտածողության հետ չեն համապատասխանում, դրանք նպաստում են մարդկանց այլասեռմանը և անբարոյական վարքագծին, ազդում է երեխաների հոգեբանության վրա, մի մասն էլ անտարբեր է այս հարցի կապակցությամբ: Մարդկանց մյուս խումբը գտնում է, որ պորնոգրաֆիկ էջերի առկայությունը Ինտերնետում ևս անհրաժեշտ է, սակայն պետք է որևէ ձևով արգելել երեխաների մուտքը այդպիսի էջեր և պահպանել խիստ վերահսկողություն երեխաների նկատմամբ՝ կապված այս հարցի հետ:

7. Եթե ձեզ հնարավորություն ընձեռվեր, ապա ի՞նչը կվերափոխեիք Ինտերնետում:
Մարդկանց մի մասը այս հարցին պատասխանել է, որ ոչինչ չեր ցանկանա փոխել ինտերնետում, իսկ մյուս մասը այդքան էլ ծանոթ չլինելով Ինտերնետին, չեն կարողացել պատասխանել այս հարցին: Մի մասն էլ կցանկանար, որպեսզի Ինտերնետը լիներ անվճար և ավելի արագ, մեծանար վերահսկողությունը ինտերնետային իջերի նկատմամբ, ավելի շատանային հայալեզու ռեսուրսները ինտերնետում, ինֆորմացիան ներկայանար ավելի համակարգված ձևով, ավելի լայն զանգվածներ կարողանային օգտվել ինտերնետից, ըստ որոշակի գնահատման չափանիշի ստուգման ենթարկվեին ինտերնետային էջերը և դրանից հետո միայն նոր տեղադրվեին այդ համաշխարհային ինֆորմացիոն ցանցում, արգելվեին որոշ էջեր ընդհանրապես:

8. Դուք ծանո՞թ եք **IATP** ծրագրի գործունեությանը:
Այո=33 Ոչ=17 (Եթե ոչ, ապա խորհուրդ կտայինք այցելել մեր ինտերնետային էջը հասեցով:)

9. Ի՞նչ կուզենայիք փոխանցել **IATP** ծրագրին:
Պատասխանողների մի մասը ոչինչ այս հարցին չի պատասխանել, մի մասը հայտնել է իրենց խորը_____ երախտիքը, մի մասը մաղթել է հաջողություններ, ծրագրի ընդլայնում և ավելի շատ գովազդում:

10. Ձեր տարիքը՝ 15-20=34 21-26=10 27-32=3 33-40=0 41-50=1 50-60=2
61 և ավելի=0:

11. Ձեր սեռը՝ Արական=22 Իգական=28

Ըստ հարցման արդյունքների պարզվեց, որ.

1. հայ հասարակությունը բավականին տեղյակ է **IREX** և նրա շրջանակներում գործող IATP ծրագրերին **(92% x 8%)**:
2. ՀՀ-ում ինտերնետի տարածվածության աստիճանը բարձր չէ:
3. հայ հասարակությունը ինչ-որ չափով տիրապետում է համակարգչին **(76% x 24%)**:
4. ՀՀ-թյան մարզերից առավել շատ Երևանում են օգտվում համակարգչից:
5. Հայաստանում հայկական ինտերնետային էջերը բարձր հեղինակություն չեն վայելում **(68% x 32%)**:
6. ՀՀ-ում 15-26 տարեկան անձինք են հիմնականում օգտվում համակարգչից:
7. ՀՀ-ում համակարգչից ավելի շատ օգտվում են արական սեռի ներկայացուցիչները **(68% x 32%)**:

Ալեքսանդր Հակոբյան, IATP Trainer,
Բաբկեն Ջուհարյան, IATP Technical Assistant
Գ. Վահանյան, IATP ծրագրի ղեկավար (1998-2003թթ.)